

## ՄԱՅՐ ԱԹՈՒ

Գէորգեան ձեմարանի 1913-14 թ. արձանատրները:

Ձեմարանի հրապարակական քննութիւնները սկսուել են Ապրիլի 16-ից և վերջացել Մայիսի 31-ին: Յունիսի 1-ին Ձեմարանի յարանական բաժինն աւարտող ուսանողներն երախտագիտական զգացումով լցուած առ Ազգիս Վեհափառ Հայրապետն և Ձեմարանի հիմնադիր երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Գ-րգ Կաթուղիկոսն՝ ս. պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգստեան կարգ կատարել առին հիմնադրի շիրմի վրայ, որտեղ ընկերների կողմից խօսեց Գարեգին Գարբիէլեանը: Ապա զնացին Վեհարան և առջնորդութեամբ Տեսուչ Տ. Բազրաս եպիսկոպոսի ներկայացան Վեհափառ Կաթուղիկոսին, այստեղ բոլոր ուսանողների կողմից Աշոտ Հախումեանը երախտագիտական և շնորհակալական խօսք ասաց: Վեհափառն օրհնեց աւարտողներին և յորդորեց կեանքի մէջ սրբութեամբ կատարելու իրենց պարտականութիւնները համաձայն Ձեմարանի հիմնադրի կամքի: Աւարտողները ստանալով Վեհափառի օրհնութիւնը հեռացան Վեհարանից զգացուած սրտով:

Հարանական բաժինն աւարտել են 15 հոգի, ներկայացնելով իւրաքանչիւրը աւարտական շարագրութիւն հետևեալ նիւթերից:

1. Այվազեան Եղիշէ Իգլիբ. Մաւեցի «Նարդոսը իբրև վիպասան»,
2. Աւչեան Գէորգ Հայթաղցի (Էջմ. գ.) «Արարատեան աշխարհը XVII դարում»,
3. Բաղդասարեան Երեմիա Գորիսեցի «Համբարութիւնը Հայոց մէջ»,
4. Գարբիէլեան Գարեգին Փարպեցի «Յ. Յովհաննիսեան, Ա. Իսահակեան և նորագոյն ուսսա՛յայ քնարերգութիւնը»,
5. Դանիէլեան Աշոտ Շուշեցի «Հերբարտեան ուղղութիւնը հայ մանկավարժութեան մէջ»,
6. Երկարակեցեան Միսակ Բաղէշցի «Անհատականութիւն և կրթութիւն»,
7. Խաչատրեան Գամաղիէլ

Վաղարշապատցի «Վաղարշապատի խօսուածքը», 8. Հախումեան Աշոտ Շուշեցի «Գանձասարի վանքը», 9. Մառանջեան Մեսրոպ Ալէքսանդրապօլցի «Հայկական գաղթականութիւնները և պատճառները ըստ հայ պատմագիրներին», 10. Մարտիրոսեան Մեսրոպը Խլաթեցի «Աշխատանքի սկզբունքը դպրոցում», 11. Շաւարշեան Շաւարշ Իգդիր-Մաւեցի «Աւետիս Ահարոնեանը իբրև վիպագիր», 12. Սարգսեան Հրանտ Սամաղարցի «Ս. Մանգինեանը որպէս մանկավարժ», 13. Սիմոնեան Մկրտիչ Ալէքսանդրապօլցի «Արաբների արշաւանքները ըստ հայ պատմագիրներին», 14. Տէր-Յակոբեան Վաղինակ Թաւրիզեցի «Հայաստանի հասարակական-տնտեսական դրութիւնը XI—XIII դարերում ըստ հայ պատմագիրներին», 15. Քոչարեան Ստեփան Վաղարշապատցի «Շիրվանզաղէն իբրև դրամատուրգ»:

Իսկ դասաւորանական (Զ. բզ) բաժինն աւարտել են 25 հոգի: 1. Աղաբաբեան Կարապետ Ալէքսանդրապօլցի 2. Աստուածատրեան Հմայեակ Սասունցի, 3. Աւետիսեան Անդրանիկ Հին-Բայազիզցի 4. Բաբազաղլեան Մկրտիչ Ռուշչուքցի (Բուլղ.) 5. Բաբանեան Գասպար Ղզարցի 6. Գասպարեան Մամիկոն Ախալցխացի, 7. Գրիգորեան Դանիէլ Սոզիւտլեցի (Ալ. գ.), 8. Խշտոյեան Եղիշէ Իգդիրցի, 9. Կոստանեան Յարութիւն Ալէքսանդրապօլցի, 10. Համբարձումեան Կարապետ Ներքին Ազացի, 11. Ղարաղանեան Եզնիկ Արթիկցի (Ալ. գ.), 12. Ղումդումաճեան Արաւազդ Կարնեցի, 13. Մանուկեան Յակոբ Դալուլարցի (Եր. գ.), 14. Մինասեան Գէորգ Վաղարշապատցի, 15. Միշեան Լիբարիտ Կարսեցի, 16. Պօղոսեան Ռուբէն Հաջիւլարցի (Էջմ. գ.), 17. Սանթրոսեան Մուշեղ Դիլիշանցի, 18. Սարգսեան Աբամ Գժաձորցի (Հ. Նախ. գ.) 19. Սողոմոնեան Գէորգ (Ն. Նախ. շրջ.) 20. Վարդանեան Երուանդ Արմտլեցի (Կարսի շրջ.), 21. Վարդապետեան Շաւարշ Փոքր Գիօնդ (Ախլ. գ) 22. Տարխաշեան Հմայեակ Ալէքսանդրապօլցի, 23. Տէր Թորոսեան Ստեփան Կուլիվամցի (Ախլբ. գ.) 24. Տէր Մարտիրոսեան Յովհաննէս Ղիշազցի, 25. Յնդբեան Երուանդ Կոսպեցի (Տրապիզոնի թ.):

Մայիսի 2-ի Բարձրագոյն հրամանով, համաձայն Վեհափառ Հայրնապետի առաջարկութեան, Շամախու թեմի առաջնորդ է հաստատուած Մայր Աթոռի միաբան Տ. Կարապետեպիսկ. Տէր Կիրաչեանը, միաժամանակ արձակուելով նոյն պաշտօնից Տ. Անանիա արքեպիսկ. Համազասպեանը:

Շամախու թեմը բազմաթիւ կարիք ունեցող թեմ է, ցանկանում ենք նոր թեմակալ սրբազանին կարողութիւն իւր վրայ դրուած պարտականութիւնները յաջողութեամբ կատարելու:

Յունիսի 5-ին ս. էջմիածնում Գայանէի վանքում Ճեմարանի Տեսուչ Տ. Բագրատ եպիսկոպոսն կուսակրօն արեղայ ձեռնադրեց Յովհաննէս Կարապետեանին, կոչելով Յովհանն. Տ. Յովհանն արեղան իւր ընկեր Գրիգոր Սարաֆեանի հետ մարտ ամսին եկել էին Ամերիկայից ս. էջմիածին, առաջինը պատրաստուելու ընդունուելու կուսակրօն միաբանից շարքը, իսկ երկրորդը, որն աւարտել է Ամերիկայի եէյլ համալսարանի աստուածաբանական ճիւղը, աւելի ևս պատրաստուելու ու ապա մեկնելու ուսուցչութիւն անելու Կիրիկիան նորաբաց ձեմարանում: Տ. Յովհանն արեղան ծնուել է Պրուսայի մէջ 1888 ին: Աւարտել է Կ. Պօլսի Բոբերա Կոլլէճը 1910 թ. «Պսակաւոր արեւստից» աստիճանով: Ապա սովորել է Նիւ-Եօրքի Երևնիէն աստուածաբանական ձեմարանում և Կորմբիա համալսարանում և աւարտել է 1913 թ. առաջինում «Պսակաւոր Աստուածաբանութեան» տիտղոսով, իսկ երկրորդում փիլիսոփայութեան ճիւղը «Վարդապետ Արուեստից» աստիճանով: Տ. Յովհանն արեղան բողոքական ծնողների զաւակ է, ինքն ևս եղած է բողոքական, բայց ապա ընդունուել է հայ-առաքելական եկեղեցւոյ ծոցը: Տ. Յովհանն արեղան լաւագոյն ձգտումներով անձն է: Նա ամբողջապէս սողորուած է իրեն նուիրելու Տաճկաստանի հայ ժողովրդի կրթական և դաստիարակչական սուրբ գործին: Բողոքականութիւնից դառնալով մայր եկեղեցու ծոցը, առաջնորդուել է այն գեղեցիկ հայեացքով՝ թէ անսեղի բան է ներկայ ժամանակում դաւանական հայեացքների պատճառով անջատուել մեզ ա-

մենքին՝ գուրգուրող և մեզ ամենքին պատասպարող նեմա-  
բիս մայր ազգային եկեղեցուց։ Նա եկել է այն ճշմարիտ  
եղբրակացութեան, որ տառապանքները շրջանում հայ գա-  
ւաղներին միակ պաշտպանը և միակ մխիթարողն եղել է  
ազգային եկեղեցին, հետևապէս նրանից գաւանարանական  
հայեացքների պատճառով խորթացած գաւաղները պէտք  
է կրկին հետզհետէ յետ գառնան իրենց ճշմարիտ մօր  
ծոցը և ամենքը միասին, իբրև մի տանջուած մօր հարա-  
զատ գաւաղներ, ձեռք ձեռքի տուած առջ տանեն տաճ-  
կահայ ժողովրդի կեանքի վերածնունդը։ Մենք սրտանց  
յաջողութիւն ենք մաղթում մաքուր զգայմունքներով  
տագորուած Տ. Յովհանն արեղային և ցանկանում նորան  
յաջող գործունէութիւն Տաճկաստանի հայ ժողովրդի մէջ.  
Թող նորա զեղեցիկ օրինակին հետեւեն Մայր ազգային  
եկեղեցուց հեռացածները։ Այժմ աւելի քան անհրաժեշտ  
է, որ մեր տաճկահայ եղբայրները մի կողմը քողկելով  
դաւանական վէճերը, բոլոր միասին, իբրև Մայր երկրի  
հարազատ գաւաղներ, ձեռք ձեռքի տուած նուիրուեն Տաճ-  
կաստանի նոր կեանքի վերածնութեան սուրբ գործին։

Յունիսի 4-ին Մայր Աթոռ էին եկել Թիֆլիսի  
Քայիանեան դպրոցի եօթներորդ դասարանն աւարտող  
աշակերտուհիները՝ առաջնորդութեամբ իրենց Տեսուչ  
Սարգիս Արովեանի։ Վեհափառ Հայրապետի կարգադրու-  
թեամբ հիւրասիրուեցին երեք օր։ Բոլորն էլ ներկայացան  
վեհափառ Հայրապետին և համբուրեցին ս. աջը, ստանա-  
լով նորա օրհնութիւնը։ Մ. Էջմիածնից ճանապարհուեցին  
Օշական, լցուած բուռն փափագով տեսնելու և համբու-  
րելու ս. Մեսրոպի գերեզմանը։ Աշակերտուհիները զիտե-  
լով Մայր Աթոռի և շրջակայ պատմական վայրերը, ամե-  
նաբաղջը տպաւորութիւններով վերադարձան Թիֆլիս։

Մայիսի 18-ին Մայր Տաճարում հանդիսաւոր ս. պա-  
տարադից յետոյ հոգեհանգստեան կարգ կատարուեց մեծ  
բարերար հանգուցեալ Շուշեցի Աւետիք, սորա կին Աննա  
և նոցա գուստր Թամարա Ղուկասեանների համար իբրև  
յարգանք նոցա բարեգործական նպատակներով թողած  
գումարները առթիւ։

Յունիսի 8-ին մեծ շուքով կատարուեց ս. Էջմիածնի տօնը: Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութեան և ժողովրդոց խուռն բազմութեան ուղեկցութեամբ հանդիսաւոր կերպով Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց իջնել Մայր Տաճարը: Վեհափառ Հայրապետի, միաբանութեան և ուխտաւորների մեծ բազմութեան ներկայութեամբ ս. պատարագն մատուցեց Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսը, որից յետոյ նոր բարեփոխած ձևով կատարուեց Հայրապետական գոհարանական մաղթանք:

Ըստ սովորականին կատարուեցին Յունիսի 2-ին և 3-ին նաև Հոբիսիմեանց և Պայիանեանց տօները համանուն վանքերում: Վեհափառն ևս բարեհաճեց ներկայ լինել այդ վանքերում ս. պատարագին:

Յունիսի 8-ին ս. Էջմիածին էին եկել Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացների ուսանողուհիները, որոնք ևս Մայր Աթոռի ու շրջակայ հնութիւնները դիտելուց յետոյ գնացել էին Օշական, տեսնելու և համբուրելու ս. Մեսրոպի գերեզմանը:

Վեհափառ Հայրապետի Դիւանը իւր 9 Յունիսի թիւ 830 զրութեամբ յայտնում է խմբագրութեանս հետևեալը. «Մայր Աթոռի «Արարատ» ամսագրի խմբագիր Տ. Բարգէն վարդապետին՝

Ի նկատի ունենալով, որ «Արարատ»ի խմբագրութեան անդամութիւնից հեռացաւ պ. Գ. Էղիլեանը՝ Նորին Ս. Օծութիւնը բարեհաճեց ազատ համարել նաև պ. Գ. Ալթունեանին խմբագրութեան անդամութիւնից և «Արարատ»ի խմբագրութիւնը յանձնել բարձրապատուութեանդ: Բարեհաճեցէք ստանալ պ. Ալթունեանից «Արարատ»ի խմբագրութեան գործերը, զրքերն ու հաշիւները, եթէ կան նորա մօտ»:

